ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
~~<<~~ ~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ~~ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. ~~Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք)~~ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը 1998 թվականի հուլիսի 1-ի ՀՕ-248 լրացնել ~~հետևյալ բովանդակությամբ~~ նոր 209.1 հոդվածով.

« Հոդված 209.1 ~~Տեսագրության~~ Տեսակապի միջոցով վկայի և տուժողի հարցաքննության առանձնահատկությունները

~~1. Տեսագրության միջոցով վկայի և տուժողի հարցաքննությունը կարող է կատարվել հետևյալ դեպքերում.~~

~~1) եթե վկան և տուժողը առողջական վիճակի կամ այլ հարգելի պատճառներով չի կարող մասնակցել գործով վարույթին,~~

~~2) վարույթին մասնակցող վկայի և տուժողի անվտանգությունն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով,~~

~~3) անչափահաս վկայի և տուժողի հարցաքննության կատարման համար,~~

~~4) տարեց կամ զառամյալ վկայի և տուժողի հարցաքննության կատարման համար,~~

~~նախաքննության արդյունավետությունն ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված~~

1. Տեսակապի միջոցով վկայի և տուժողի հարցաքննությունը կարող է կատարվել, եթե՝

1) վկան և տուժողն առողջական վիճակի կամ տարիքի պատճառով չեն կարող ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմին.

2) անհրաժեշտ է ապահովել վկայի և տուժողի անվտանգությունը.

~~5)~~ 3) հարցաքննության կատարումն անհնարին է կամ անհրաժեշտ է ապահովել նախաքննության արդյունավետությունը:

2. ~~Տեսագրության~~ Տեսակապի միջոցով վկայի և տուժողի հարցաքննությունը կատարվում է քննիչի հանձնարարության հիման վրա, որն ուղարկվում է հարցաքննության ենթակա վկայի և տուժողի գտնվելու վայրի նախաքննության կամ հետաքննության մարմնին՝ սույն օրենսգրքի 191-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով:

3. Հանձնարարության հիման վրա վկայի և տուժողի գտնվելու վայրի նախաքննության ~~մարմնի քննիչը~~ կամ հետաքննության մարմինը կատարում է անհրաժեշտ դատավարական գործողություններ՝ ~~տեսագրության~~ տեսակապի միջոցով վկայի և տուժողի հարցաքննության անցկացումն ապահովելու նպատակով:

4. ~~Տեսագրության~~ Տեսակապի միջոցով վկայի և տուժողի հարցաքննությունը կատարվում է սույն օրենսգրքի 206-րդ և 208-րդ հոդվածներով սահմանված կանոնների պահպանմամբ՝ հաշվի առնելով սույն հոդվածում շարադրված առանձնահատկությունները, իսկ անչափահաս վկայի և տուժողի հարցաքննության դեպքում՝ հաշվի առնելով նաև սույն օրենսգրքի 207-րդ հոդվածով սահմանված պահանջները: Հարցաքննությունից առաջ վկայի և տուժողի գտնվելու վայրի նախաքննության ~~մարմնի քննիչը~~ կամ հետաքննության մարմինը ստուգում և հաստատում է վկայի և տուժողի ինքնությունը, իսկ գործով վարույթն իրականացնող քննիչը կատարում է հարցաքննությունը: Հարցաքննության կատարման ընթացքում վկայի և տուժողի գտնվելու վայրի նախաքննության ~~մարմնի քննիչի~~ կամ հետաքննության մարմնի աշխատակցի ներկայությունը պարտադիր է:

5. ~~Տեսագրության~~ Տեսակապի միջոցով վկայի և տուժողի հարցաքննության ընթացքը և արդյունքները ~~ձայնագրվում և (կամ) տեսագրվում~~ տեսաձայնագրառվում են տեխնիկական միջոցներով սույն օրենսգրքի 29-րդ հոդվածի կանոններին համապատասխան~~, իսկ եթե վկան չի առարկում, ապա հաշվի առնելով նաև սույն օրենսգրքի 209-րդ հոդվածի 3.1-րդ մասով շարադրված առանձնահատկությունները~~:

6. Տեխնիկական միջոցների կիրառմամբ ~~տեսագրության~~ տեսակապի միջոցով վկայի և տուժողի հարցաքննության ընթացքում պետք է ապահովվի պատկերի և ձայնի պատշաճ որակը, ինչպես նաև տեղեկատվական անվտանգությունը:

7. ~~Տեսագրության միջոցով հարցաքննության արձանագրությունը կազմվում է սույն հոդվածով սահմանված կանոնների պահպանմամբ՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի 29-րդ և 209-րդ հոդվածներով շարադրված առանձնահատկությունները:~~

Տեսակապի միջոցով հարցաքննության արձանագրությունը կազմվում է սույն օրենսգրքի 29-րդ եւ 209-րդ հոդվածներով սահմանված կանոնների պահպանմամբ՝ հաշվի առնելով սույն հոդվածով շարադրված առանձնահատկությունները: Հարցաքննության արձանագրությունը կազմում է վկայի և տուժողի գտնվելու վայրի նախաքննության ~~մարմնի քննիչը~~ կամ հետաքննության մարմինը՝ նշում կատարելով այդ մասին և ստորագրելով:

8. Հարցաքննության արձանագրությունը, վկայի և տուժողի ներկայացրած նյութերը, փաստաբանի արտոնագիրը, եթե վկան և տուժողը հարցաքննության են ներկայացել փաստաբանի հետ, վկայի և տուժողի գտնվելու վայրի նախաքննության ~~մարմնի քննիչը~~ կամ հետաքննության մարմինն ուղարկում է գործով վարույթն իրականացնող քննիչին:

9. Գործով վարույթն իրականացնող քննիչը, ստանալով ~~տեսագրության~~ տեսակապի միջոցով վկայի և տուժողի հարցաքննության արձանագրությունը՝ կից նյութերով, և ստուգելով դրանք, ստորագրում է հարցաքննության արձանագրությունը:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: